ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-5/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 03.11.2017թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝

Մասնակցում էին՝ **Գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության պետ, գնդապետ Հ. Կարապետյան (ԳԱՊ),
ՀՀ ԶՈՒ ՀՕՊ զորքերի վարչության կապի պետ, փոխգնդապետ Ա. Սարգսյան,
ՀՀ ՊՆ ՌՌ ՀՕԾ բաժնի ավագ սպա, մայոր Հ. Բարսեղյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ՀՕՊ, ՌԷՊ, կապի և ավիացիոն միջոցներով ապահովման բաժնի գլխավոր մասնագետ Գ. Սարգսյան:
Բացակայում է ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյանը:

Գնումների համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Ա.Ամիրյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-5/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Ամիրյան)

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Ամիրյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-5/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ի, «Կոմպասս» ՍՊԸ-ի, «Փեն Բոքս» ՍՊԸ-ի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերը այդ թվում ապրանքների տեխնիկական բնութագրերը առկա են և համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերի պահանջներին:
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն՝ «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ-ն և «Կոմպասս» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն: Նույն եզրակացության համաձայն՝ «Փեն Բոքս» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ

հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ՝ 1 497 526 (մեկ միլիոն չորս հարյուր ինսունյոթ հազար հինգ հարյուր քսանվեց) ՀՀ դրամի չափով:

Հիմք ընդունելով վերոգրյալը գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Փեն Բոքս» ՍՊԸ-ի հայտը:

1.2 03.11.2017թ. հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Կոմպլուտեր Սերվիս» ՍՊԸ-ի և «Կոմպասս» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-5/3» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ և անգործության ժամկետի ավարտից հետո վերջիններիս պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 «Փեն Բոքս» ՍՊԸ-ի հայտը մերժելու արդյունքում, քանի որ 7-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած և բավարար գնահատված «Մարինե-90» ՍՊԸ-ի ներկայացրաց գինը գերազանցում է պատվիրատուի՝ տվյալ չափաբաժնի համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները, մասնակիցը ծանուցվեց 07.11.2017թ. ժամը 11[00]-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կայանալիք բանակցությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-5/3» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել վերը նշված բանակցությունների օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Հ. Կարապետյան
Գնահատող,	Գ. Սարգսյան
Գնահատող,	Հ. Բարսեղյան
Գնահատող,	Ա. Սարգսյան
Գնումների համակարգող՝	Ա. Ամիրյան

03.11.2017թ.